Մուրացան

Հատուկ թղթակիցը

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱԿԻՑԸ

(Գավառացու օրագրից)

Ա

Որ ես այժմ բախտավոր եմ, դրա մասին կասկած չունիմ. բայց կցանկանայի, որ դուք էլ համոզվիք, թե իրավ, բախտավոր եմ: Այս ապացուցանելու համար կարիք չկա ճառ խոսելու, բավական է ասել թե թղթակից եմ և ամեն բան կհասկացվի:
Բայց հասկանալուց առաջ բնական է, որ դուք հետաքրքրվիք իմանալ, թե ինչպե՞ս պատահեց այդ, այսինքն որ ես, «առանց պատշաճավոր պատրաստության», դարձա հայոց թերթի թղթակից:
(Չակերտներում դրված բառերը ո՛չ թե իմ խոստովանությունը, այլ ձեր կարծիքն է, որի դեմ բողոքում եմ. որովհետև հասարակությունն իրավունք չունի իմ մասնավոր կյանքը քննելու, իսկ պատրաստություն ունենալու կամ չունենալու խնդիրը, ինչպես հայտնի է, վերաբերում է զուտ մասնավոր կյանքին, ինչպես և իմ կուշտ կամ քաղցած լինելու խնդիրը դարձյալ վերաբերում է դրան):
Բայց ինչ որ է, այժմ ձեզ կպատմեմ, թե ինչպե՞ս պատահեց այդ:
Մի օր ես միայնակ ճեմում էի մեր պատշգամբի վրա, և մտածում ա՛յն մասին, թե ինչպե՞ս են անում մարդիկ, որ մեծ քաղաքներում հրատարակվող թերթերի թղթակից են դառնում:
Խնդիրը լուրջ էր, ես էլ մտածում էի լրջորեն: Հանկարծ մի սաստիկ ցանկություն

զգացի թղթակից դառնալու: Չգիտեմ, Պառնասի մուսաների մեջ կա՞ արդյոք թղթակցություն ներշնչող մուսա, թե՞ ոչ, եթե կա, ապա ինձ թվում է, թե թղթակից դառնալու այդ հանկարծական ցանկությունը հենց նա է ներշնչել ինձ. իսկ եթե չկա, դարձյալ չպիտի մեղադրեք ինձ: Ո՞վ չէ ձեզանից գեթ մի անգամ, յուր կյանքում, ունեցել այդպիսի անմեղ ցանկություն... խոսքս, իհարկե, տգետների մասին չէ, այլ ինտելիգենտների:

Հա, այն էի ասում, թե ճեմում էի պատշգամբի վրա... Եվ ահա՛ տես, որ հանկարծ փողոցի մեջ բուսան տեր Շմավոնն ու տեր Սիմոնը և կանգ առնելով ուղիղ մեր պատշգամբի դիմաց սկսան տաք-տաք վիճել: Ինձ այնպես թվաց, թե վեճը շուտով պիտի փոխվի կռվի, կռիվը՝ հայհոյանքի, հայհոյանքը՝ ծեծի... Ուստի ականջներս սրեցի, որ մի բան լսեմ քահանաների վիճաբանությունից, բայց դժբախտաբար չկարողացա, որովհետև փողոցը հեռի էր և արժանապատիվ հայրերի ձայնը ականջիս չէր հասնում:

Այսուամենայնիվ, պարզ տեսնում էի, որ նրանց ձեռքերի, ոտների և մանավանդ գլխի սաստիկ շարժումները հոգեկան ամենագրգռված դրություն էին արտահայտում: Հետևապես, եթե գրողի տաղանդ ունենայի, իմ հոգվո ականջներով կլսեի, թե նրանք ի՞նչ են ասում: Չէ՞ որ մեզանից ամեն մեկը գիտե, թե բարկացած մարդիկ ինչե՞ր կարող են խոսել:

Եվ, ահա՛ հենց այդ վայրկենից ինձ այնպես թվաց, թե այդ տաղանդն ստացա: Որովհետև, երբ տեր Շմավոնը գլուխը երեք անգամ թափահարելով մի քայլ ետ կանգնեց և ապա՝ ձախ ձեռքը կողքին դրած, իսկ աջով գավազանը շարժելով երկու քայլ առաջացավ, ես հաստատ իմացա (թեպետ չլսեցի), որ նա ընկերոջն ասաց.

Դու մի անպիտան արարած ես:

Տեր Սիմոնն, իհարկե, տակը չէր մնալու, նա էլ (եթե միայն ինքնասիրություն ուներ), պիտի ասեր.

Անպիտանը դո՛ւ ես, որ գանձանակը խորում ես:

Տեր Շմավոնն այնուհետև պարտավոր էր անվանել հակառակորդին «անխի՛ղճ ստախոս», իսկ տեր Սիմոնը նրան՝ «անամոթ ուրացող» և այսպես՝ կարգով առաջ գնալով... Ի՞նչ եք կարծում, վերջն ո՞ւմ պիտի հանգեր... Գավազանահարության:

Հա՛, շատ ապրիք, ես էլ հենց ձեր կարծիքին էի: Եվ այդ պատճառով շունչս բռնած ու սրտատրոփ սպասում էի թե ահա, ուր որ է, մեկի գավազանը կիջնե մյուսի գլխին, ճակատներից մինը կպատռվի, աչքերից մինը դուրս կպրծնի. իսկ արյունը, համենայն դեպս, կծորե մեկի կամ մյուսի երեսից: Բայց, ցավելով պիտի ասեմ, այդպիսի բան չպատահեց և քահանաները, երևի, միայն հասարակ տեսակի հայհոյանքներ ու անեծքներ տալով միմյանց, հեռացան: (Կղերականներն, ասենք, միշտ երկչոտ են. այդ ամենքս գիտենք): Ի՞նչ մեղքս ծածկեմ, շատ կոտրվեցա: Որովհետև ինքս տաք խառնվածքի տեր լինելով և մանավանդ թե կյանքով ու կրակով լի սիրտ ունենալով, չափազանց սիրում եմ վեճ, աղմուկ, կռիվ, հայհոյանք, և նամանավանդ հանդիսավոր գավազանահարություն. միայն թե այդ բաները ինձ չպատահեն, (այդ դեպքում, առհասարակ, շատ խաղաղասեր եմ), այլ պատահի ուրիշներին, ինձանից հեռու մարդկանց, իսկ ես մեր պատշգամբում կանգնած, հանգիստ սրտով դիտեմ ու զվարճանամ: Չեմ սիրում, մինչև անգամ, երբ ինձ վկա են տանում դատարան, այդպիսի դեպքում ես միշտ ասում եմ՝ «թե ոչինչ չեմ տեսել», որպեսզի ապագա գլխացավությունից ազատվեմ: Որովհետև բանը հո չէ վերջանում հաշտարար դատարանով. նրանից հետո գալիս է նահանգական դատարանը, դատաստանական պալատը, կառավարիչ սենատը, մինչև այդտեղ ով ունի գլուխ թրև գալու: Ա՛յ, ուրիշ բան է լրագիրը, մի լուր հաղորդում ես, սու՛տ թե ճշմարիտ, հարցնող չկա. մարդիկ վրդովվում են, իրար վրա են հարձակվում, իրար միս գզգզում, և դու հանգիստ նստած դիտում ես ու ծիծաղում, սրանից էլ լավ բա՞ն:

Բայց մենք խնդրից շեղվեցանք:

Հա, այն էի ասում, թե քահանաները հեռացան առանց կռվելու և այդ հանգամանքը սիրտս շատ կոտրեց, բայց մի փոքր հետո, հենց նույն հանգամանքը մի երջանիկ միտք ծնեցրեց իմ գլխում, «արի, ասացի, այս դեպքը

լուր շինեմ, մի փոքր էլ ծաղկեցնեմ և ուղարկեմ մեր թերթերից մինին, անպատճառ կտպեն: Եվ եթե տպեցին, այդ արդեն ապացույց է, որ ես գրելու տաղանդ ունեմ, ուրեմն և համարձակ կարող եմ իջնել գրական ասպարեզ»: Ասելս ու գործելս մեկ եղավ:

Ներս մտա իսկույն սենյակ, նստեցի սեղանի առաջ, առա թուղթ ու գրիչ և շարադրեցի հետևյալը.

«Մեր քաղաքում երկու քահանա փողոցում միմյանց հետ կռվեցին գավազաններով և իրար ջարդեցին»:

Երկու անգամ կարդացի այս տողերը: Առաջին անգամ նրանք դուր եկան ինձ, բայց հետո տեսա, որ խիստ կարճ են, (ես առհասարակ շատ էի սիրում երկար գրել, թեպետ չէի կարողանում): Ինչ անեմ, որ թղթակցությունս մի փոքր երկարի, մտածում էի ես: Եվ, ահա՛, հանկարծ հիշեցի, որ հայոց լրագրները կարդալիս, նրանց մեջ պատահած գեղեցիկ բառերն ու դարձվածները միշտ օրինակում եմ մի առանձին տետրակում, որպեսզի նրանցից գործածեմ երբեմն՝ բարեկամներիս նամակ գրած միջոցին, (այդ ժամանակները ո՞վ էր կարծում, թե կգա մի օր, երբ ես լրագրի իսկական թղթակից էլ կդառնամ): «Այս դեպքում էլ օգուտ կարող եմ քաղել ժողովածուից», մտածեցի ինքս ինձ և սեղանի արկղից հիշյալ տետրակը հանելով, ընտրեցի նրանից հետևյալները.

1) «Իրենց կոչման բարձրության վրա». 2) «անվայելչաբար». 3) «պատկառելի». 4) «սոսկալի» (այս բառը առհասարակ ես շատ եմ սիրում). 5) «քիթ ու պռունկ». 6) «մխիթարական կամ անմխիթար երևույթ». 7) «բարձր հոգևոր կառավարություն». 8) «ոստիկանության լուրջ ուշադրությունը». 9) «հրավիրում ենք ուշադրությունը» և 10) «գարշապար» (այս էլ իմ սիրած բառերի թվին է պատկանում):

Այս տասն ընտիր բառերն ու դարձվածներն առնելով սկսա ետ ու առաջ դնել նրանց և հարմարեցնել իմ գրվածքին: Երկու ժամվա անխոնջ պարապմունքից ետ այդ գրվածքն ստացավ հետևյալ ձևը.

«Մեր քաղաքի երկու պատկառելի քահանաներ, որոնք իրենց կոչման բարձրության վրա չեն կանգնած, փողոցում անվայելչաբար կռվեցին միմյանց հետ և իրար քիթ ու պռունկ ու գարշապար ջարդեցին: Հրավիրում ենք բարձր հոգևոր կառավարության և ոստիկանության լուրջ ուշադրությունը այս անմխիթար երևույթի վրա»: Առաջին անգամ, որ կարդացի այս լուրը, գրեթե հիացա: Այնպես լավ էր գրված, այնպես լավ, որ կարծես, իսկ և իսկ, լրագրից էր օրինակված: Միայն թե «գարշապար» բառն ինձ մի փոքր տարակուսանքի մեջ ձգեց: Գարշապարը գիտեի, որ մարմնի մի մասն է, բայց թե ո՞ր մասը, հաստատ չգիտեի. դժբախտաբար, բառարան էլ չունեի, որ նայեմ, իսկ հանել իմ գրվածքից այդպիսի մի սիրուն բառ, ափսոսում էի:

Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ, մտածեցի ես և վերջը հետևյալ հնարը գտա: Միևնույն ավուր երեկոյան գնացի եկեղեցի, (ուր, իբրև ինտելիգենտ մարդ, շատ հազիվ էի լինում) և երբ ժամասացությունն ավարտվեց, դուրս եկա բակ և այնտեղ հանդիպելով մեր քաղաքի գիտնական, բայց խիստ ետադեմ տեր Սեղբոսին, հարցրի նրան ծիծաղելով.

Տեր հայր, ի՞նչ կնշանակե «գարշապար»:

Հա, ի՞նչ է, ֆարմասոն, ուզում ես իմ գիտությունը փորձե՞լ, հարցրեց քահանան ժպիտով, (նա բոլոր լրագիր կարդացողներին ֆարմասոն էր անվանում):

Այո',- ասացի հեգնորեն:

Դե լավ, որ այդպես է, կասեմ, «գարշապար» նշանակում է ճակատ, պատասխանեց քահանան լրջությամբ:

Ճշմարի՞տ:

Այո՛, ճակատին գրաբար լեզվով ասում են «գարշապար»:

Չեք կարող երևակայել, թե որքա՞ն ուրախացա, երբ տեսա սիրածս բառը ամենահարմար տեղն եմ գործածել:

Ես, իհարկե, իսկույն հեռացա տեր Սեղբոսից: Եվ չնայելով, որ նա իմ ետևից ինձ անվանեց «ապուշ», այսուամենայնիվ ես չլսելուն դրի, որովհետև պարզ տեսա, որ նա վիրավորվեց այն պատճառով, որ ես արժան չհամարեցի փոխանակել նրա հետ դարձյալ մի քանի խոսք, այլ արհամարհելով հեռացա: Վերջապես հասնելով տուն, օրինակեցի իմ շարադրած լուրը և դրի ծրարի մեջ:

Այժմ առաջ եկավ մի ուրիշ, ավելի ծանրակշիռ հարց. արդյոք ո՞ր լրագրին դիմեմ. ազատամիտ «Հնձվորի՞ն», թե պահպանողական «Սայլորդին»: Մտածեցի երկար, չափեցի, կշռեցի և վերջը եկա այն որոշման, թե ... բայց ոչ, որոշումս ձեզ հայտնելուց առաջ անհրաժեշտ է մի խորհրդածություն:

Արդյոք պատահե՞լ է ձեզ երբևիցե գտնվել իմ դրության մեջ. այսինքն այնպիսի դրություն, որ դուք ձեր անձնական մտքերը, հասարակական գաղափարները և քաղաքական հայացքները աշխարհին հայտնի անելուց, կամ ինչպես գեղեցիկ լեզվով ասում են հասարակության սեփականություն դարձնելուց առաջ, նստեք և մտածեք թե «ո՞ր ուղղության դիմեմ, ո՞ր բանակին միանամ...»: Օ՛, մարդուս կյանքի մեջ այդ խնդրի մասին մտածելու վայրկյանը ամենից փառավորը և հանդիսավորն է... Այդ վայրկյանն է, որ քեզ առաջին անգամ զգալ է տալիս, թե դու ազատ մարդ ես և իրավունք ունես ինչ կամենաս լինելու. այսինքն և՛ ազատամիտ, և՛ պահպանողական, և ետադեմ, և՛, մինչև անգամ, կղերական... Եվ իրավ, ո՛վ իրավունք ունի ասել քեզ թե «պարոն, ինչո՞ւ ես դու կղերական»: Այդպիսի ապուշին դու ուղղակի կարող ես պատասխանել թե՝ «հենց այն պատճառով, որ դու ազատամիտ ես»: Այդ կնշանակե թե՝ որևէ ուղղության կամ բանակի պատկանելը ոչ թե խելքի կամ խոր իմաստության գործ է, այլ ազատ կամքի: Երևակայեցեք, որ դուք վերարկու չունիք և ձեզ առաջարկում են գնել մեկը չորս վերարկուներից, որոնք բոլորն էլ նոր, գեղեցիկ, փափուկ և վայելուչ են և դուք ձեր սեփական փողը վճարելով՝ նրանցից մեկը գնում եք: Ո՞վ իրավունք ունի ձեզ ասել «պարո՛ն, ինչու այս վերարկուն ընտրեցիք և ոչ մյուսը»: Չէ՞ որ ընտրությունը ճաշակի գործ է և դրա նկատմամբ երբեք չեն վիճում: Եվ ահա դուք ընտրելով այն, որը կամեցել եք, դրանով կատարել եք ձեր կամքի ու ճաշակի պահանջը: Ընտրության միջոցին, իհարկե, չեք կարող որոշել, թե եղածներից ո՞րն է փտած և ո՞րը դիմացկուն, որովհետև ձեր աչքում բոլորն էլ դեռ նոր են: Իսկ փտածն ու դիմացկունը կորոշե ապագան: Այսպես էլ ուղղությունը,

բանակը կամ կուսակցությունը: Այսօր երիտասարդ լինելով պատրաստվում ես իջնել գրական ասպարեզ, դրա համար հարկավոր է ընտրես մի կուսակցություն, ինչպես որ ձմեռը հասած ժամանակ վերարկու չունեցողն ընտրում է մի վերարկու: Սկզբում, իհարկե, դու ուշադրություն կդարձնես արտաքին փայլին և մեծահնչյուն անվանը, իսկ թե հետո ի՞նչ դուրս կգա, այդ արդեն քո բախտն է, չպիտի տրտնջաս:

Ահա՛ ճիշտ այս մտքով գործեցի և ես, երբ հարկ եղավ որոշել, թե ո՛ր լրագրին դիմեմ. «բոլոր աշխարհն, ասացին առաջ է գնում, ես ինչո՞ւ եմ ետ մնում: Վերջին վարսավիրան էլ չի ընդունում, որ իրեն չանվանես առաջադեմ կամ ազատամիտ, մի՞ թե կվայելե, որ ինձ նման ինտելիգենտը չպատկանի նույնպես ազատամիտների խմբին»:

Այսպիսի գեղեցիկ որոշման գալով ծրարս փակեցի և ուղարկեցի նրան՝ ազատամիտ «Հնձվորի» խմբագրությանը: Եվ որպեսզի աշխատությունս անկորուստ հասներ նրան, ես ծրարը ապահովագրի: Որովհետև մտածեցի, թե կարող է պատահել, որ նամակս Թիֆլիս հասնելուց անցնե հարբած մի ցրիչի ձեռք և սա փոխանակ «Հնձվորին» հանձնելու, տանե և տա պահպանողական «Սայլորդին»... Աստված մի արասցե, այդպիսի մի թյուրիմացության շնորհիվ ես ուղղակի զոհ կդառնայի իմ լուրջ սկզբունքներին, այսինքն ստիպված կլինեի պահպանողական դառնալու: Որովհետև պարզ է, որ ինչ թերթում տրվում է մարդու անդրանիկ գրվածքը, այն թերթի ուղղությանն էլ նա պիտի հետևե: Հո չի կարելի սեփական մտքի ստեղծագործությունից հրաժարվել այս ու այն ուղղության պատճառով:

Ինչևէ, փոստային մի ավելորդ մարկա ապահովագրեց իմ համոզմունքը և պարզապես որոշեց իմ ուղղությունը:

Այնուհետև ամեն անգամ, որ Թիֆլիսից ստացվում էր «Հնձվոր» թերթը, ես նյարդային հուզմունքով սկսում էի նրա մեջ պտրտել իմ լուրը: Իմ աչքը չէին գալիս ո՛չ այդ թերթի առաջնորդողները, ո՛չ արտաքին տեսությունը, ո՛չ բանսիրականը... Ես զբաղվում էի միայն նրա ներքին տեսությամբ, որովհետև իմ «երկը» միայն այդտեղ կարող էր լինել: Եվ ես պտրտում էի... բայց ինչպե՜ս էի պտրտում, սրտատրոփ, շնչասպառ... ո՜վ քաղցր վայրկյաններ իմ գրական

անդարձ անցյալի... Եվ ահա՛ մի օր, բայց ոչ, մի երջանիկ օր, երբ այլևս հույս չունեի, թե կարող եմ իմ «երկը» տպագրված տեսնել, ստանում եմ «Հնձվորը» և, ըստ սովորականին, նրա ներքին տեսությանը նայում: Հանկարծ, ո՛վ զարմանք, գավառական լուրերի շարքում տեսնում եմ տպված իմ «հաղորդագրությունը»... Տպված եմ ասում, հասկանո՞ւմ եք: Բայց ո՛չ, անկարելի է, որ հասկանաք, կամ գոնե այնպես հասկանաք, ինչպես որ ես էի հասկանում... Դրա համար պետք է, որ կարողանաք հուզվել, ոգևորվել, տքնության ժամեր անցնել, ինչպես որ ես էի անցրել, որպեսզի հասկանաք, թե ի՞նչ է նշանակում «սեփական աշխատությունը» տպագրված տեսնել...:

Եվ ես սկսա կարդալ իմ «աշխատությունը» մեկ, երկու, երեք, չորս և վերջապես տասն անգամ կարդացի և էլ չէի կշտանում: Զարմանալի է. որքան էլ որ թղթի վրա գրվածը լավ է թվում գրողին, լրագրի մեջ տպագրվածը նրանից տասն անգամ ավելի լավ է թվում: Եվ դրա գաղտնիքը, ես կարծում եմ, նրանումն է, որ մարդ յուր գրվածքը տպագրելուց հետո՛ է միայն համոզվում թե ինքը, արդարև, «թղթակից է»:

Եվ այսպես, մեծ երանություն պատճառեց ինձ իմ անդրանիկ «երկի» տպագրությունը: Ցավալի էր միայն, որ նրանից հանել էին երկու բառ, առաջինը «ոստիկանություն» և երկրորդը՝ «գարշապար»: Ոստիկանությունը ոչինչ, բայց գարշապար բառի անհետանալը շատ վրդովեց ինձ:

Մեկ մտածեցի, թե վեր կենամ մի նախատական նամակ գրեմ խմբագրությանը և բացատրություն պահանջեմ «թղթակցի» պատվի հետ այդպիսի կոպտությամբ վարվելու համար, մեկ էլ ինքս ինձ ասացի, «ո՛վ գիտե, ո՞ր անգութ ձեռքն է հանել այդ բառերը, նույնիսկ խմբագրի կամքի հակառակ... ավելի լավ է լռել, ապա թե ոչ կարող են մեզ նույնիսկ քաղաքական հանցավոր ճանաչել...»: Եվ այսպես, ես հաշտվեցի իրողության հետ, մխիթարելով ինձ ա՛յն քաղցր մտածությամբ, թե ես ուրեմն, «գրող» եմ և կարող եմ այսուհետև համարձակ իջնել գրական ասպարեզ և կանգնել այն մարդկանց շարքում, որոնք իրենց անվանում են «թղթակից-հրապարակախոս»:

Հետո «Հնձվորում» տպված իմ լուրի շուրջը կարմիր թանաքով մի հաստ ու գեղեցիկ շրջանակ քաշեցի և թերթը կախեցի սեղանի առաջ՝ հանդիպակաց

պատին, լուսանցքի վրա նախապես գրելով հետևյալը. «Այս է իմ գրական առաջին «երկը», որ լույս տեսավ 1873 թվականի մայիսի 25-ին: Իմ գրական գործունեության քսանհինգամյակը լրանում է 1898 թ. մայիսի 25 -ին»:

Բ

Ասում են՝ դիպվածները շատ անգամ «փոքրիկ» մարդկանց դարձնում են «մեծ»: Եվ այդ ճիշտ է: Եթե տեր Շմավոնի գավազանը իջած չլիներ տեր Սիմոնի գլխին (գրական էտիկետը պահանջում է, որ մի անգամ հայտնածս ճշմարտության վրա պնդեմ մինչև վերջը), ես, իհարկե, այսօր թղթակից չէի դառնալ ազատամիտ «Հնձվորին», այն էլ ոչ թե պատահական, այլ «հատուկ»:

Այժմ կհետաքրքրվեք իմանալ, թե ե՞րբ դարձա ես «հատուկ թղթակից», քանի որ այդ մասին դեռ ոչինչ չեք լսած: Պատմեմ համառոտ:

«Հնձվորի» համարը մեր քաղաքում ստացվելուց մի օր հետո դուրս եկա փողոց իմանալու համար, թե ի՞նչ են խոսում արդյոք լույս տեսած լուրի մասին: Որքա՜ն մեծ եղավ իմ ուրախությունը, երբ թեմական դպրանոցի ծանոթ ուսուցիչներից մինը հայտնեց, թե այդ լուրը մեծ իրարանցում է ձգել քահանաների մեջ, իսկ սրբազան առաջնորդն այնքան է վրդովվել, որ հրամայել է գործակալներին քննություն կատարել և հանցավորներին գտնելով խստությամբ պատժել: Հետաքրքրական է իմանալ, թե ո՞վ է գրել այդ լուրը, հարցրի ես կեղծ միամտությամբ:

Ով որ գրել է, շատ լավ է գրել, թեպետ լուրը կարճ է, բայց երևում է, որ գրողի գրչում թույն կա. երկու խոսքով քաղաքն իրար է տվել:

Քիչ էր մնում, որ այս գովեստը լսելուց խելքս թռցնեի և գրկելով վարժապետին՝ բացականչեի.

Գրողը ես եմ, ես, պարոն Ճաճուռյան, այդ թունավոր գրիչն ինձ է պատկանում, այդ ե՛ս եմ, որ երկու խոսքով քաղաքն իրար եմ տվել:

Այո՛, ուզում էի այս խոսքերն ասել, բայց չգիտեմ ինչպե՛ս, քաջություն ունեցա ինձ զսպելու: Եվ հենց այդ վայրկյանին մի մեծ գյուտ արի, այսինքն՝ եկա այն

համոզման, թե ինը մուսաներից մինը անպատճառ «լռեցնող է»: Եվ իրավ, եթե բոլոր մյուսները ոգևորում են մարդկանց գրելու, խոսելու կամ երգելու, չէ՞ որ մեկն էլ պետք է լինի, որ խիստ եռանդոտների աշխույժը չափավորե՝ գրողի ձեռքը, խոսողի լեզուն և երգողի ձայնը տկարացնելով: Եվ, իմ կարծիքով, այդ «լռեցնող» մուսան ամենից ավելի բարեկամ է մարդկանց, որովհետև յուր ներշնչումով արգելք է լինում անտեղի ստեղծագործություններին: Իսկ այդպիսի ստեղծագործություններ որքա՞ն շատ կարող են լինել աշխարհում: Եվ, ահա, ուրեմն, այդ բարեսիրտ մուսայի շնորհիվ ես չբացականչեցի Ճաճուոյանի առաջ և չմատնեցի ինձ:

Բայց նույն ավուր երեկոյան գնացի եկեղեցի իմանալու համար, թե ի՞նչ հետևանք է ունեցել գործակալի քննությունը: Եվ որքա՛ն մեծ եղավ իմ զարմանքը, երբ իմացա, որ տեր Շմավոնի ու տեր Սիմոնի փոխարեն պատժվել են տեր Գրիգորն ու տեր Սահակը, որոնց մասին, ինչպես գիտեք, ոչինչ չէի գրած: Իմ հարցին, թե ինչի՞ համար են դրանք պատժվել և ոչ թե ուրիշները, քանի որ լրագրում անուն չէ հիշված, պատասխանեցին թե՝ «հարցուփորձից պարզվել է, որ դրանք մի օր կռվել են իրար հետ գերեզման օրհնելիս»:

Ուրեմն, ճշմարտություն դուրս եկավ թաքստից, կեցցե՛ լրագիրը, բացականչեցի ես: Հա, ֆարմասոն, չլինի՞ թե դու ես լուր տվել «Հնձվորին», խոսեց հետևիցս տեր Սեղբոսը, որ լսել էր իմ բացականչությունը:

«Ահա՛ գրելու նյութ թղթկցին պտրտում են...» մտածեցի ես և, չնայելով որ այդ քահանային արհամարհում էի, իբրև հետադեմ կղերականի, այսուամենայնիվ որոշեցի այս անգամ չարհամարհել, մտածելով, թե քանի որ սա ինքն ընդունում է, որ ես կարող եմ լուրեր տալ լրագրին, թող այդպես էլ իմանա և երկյուղ կրե ինձանից:

Հա, դիցուք, թե ես եմ տվել, ի՞նչ եք ուզում ասել, հարցրի ես մի առանձին խստությամբ:

Այն եմ ուզում ասել, որդի, պատասխանեց նա ձայնը մեղմացնելով, որ երբ մի բան գրում եք, ուղիղը գրեք:

Ինչ որ լրագրում գրվում է, նա անպայման ուղիղ է, սովորեցեք, վերջապես, պատկառիլ տպված խոսքից, բարկացա ես արդար բարկությամբ:

Տեր Սեղբոսը, կարծեմ, երկյուղից կորցրեց իրան:

Ոչ, այդ չէի ասում... կակազեց նա, կարծեմ պատժված քահանաներն իրար չեն խփել, այլ միայն հայհոյել են:

«Ահա՛ գրելու երկրորդ նյութ իսկությունն ուրանում են», մտածեցի ես և ապա հարցրի.

Եթե այդպես է, գործակալն ինչո՞ւ էր պատժում նրանց:

Այդ մեկը չգիտեմ. ա՛յ, հենց նա ինքը գալիս է այստեղ. հարցրու, մենք չենք կարողանում նրա հետ այդպիսի հարցերից խոսել:

Ինչո՞ւ չեք կարողանում:

Ինչպե՞ս կարողանանք, գործակալ մարդ է, մեկ էլ տեսար գնաց սրբազանի առաջ մեզ զրպարտեց, նա էլ հրամայեց, թե գնա՛ տեր Սեղբոսին պատմիր: Այն ժամանակ ո՞վ է մեզ պաշտպանում:

Մենք, գրականության մշակներս, բացականչեցի ես խրոխտաբար և այդ վայրկենին ինձ թվաց, թե մի առանձին ուժ ստացա տկարներին և անմեղներին պաշտպանելու համար: Վերջապես մոտեցավ գործակալ քահանան: Դա մի տգետ գյուղացի էր. բայց երեսի պնդությամբ կարողացել էր ոչ միայն գյուղից փոխադրվել քաղաք, այլև այդտեղ կարգվել էր գործակալ:

Իմ հարցին թե ինչո՞ւ պատժել եք տեր Գրիգորին ու տեր Սահակին, նա կոպիտ, գավառական բարբառով պատասխանեց.

Ինչպե՞ս թե ընչի՞, հեր օրհնա՛ծ, նրանց անիրավութենի համբավը հասել ա Թիֆլիս. սաղ աշխարհը նրանց վրա ա խոսում, հմի դու ասում ես ընչի՞ ենք պատժել:

Բայց ի՞նչ են արել նրանք, հարցրի ես խստությամբ:

Կռվել, հայհոյել, իրար ծեծել են, էլ ի՞նչ պտի անեն:

Իսկ ես լսել եմ, որ նրանք կռվել են խոսքով, բայց չեն ծեծել իրար:

Հա, իմ քննության վախտն էլ տրհենց ասեցին, ամա դե ես պատժեցի:

Էլ ինչո՞ւ էիր պատժում, քանի որ քննությունն այդ լուրը չէ արդարացրել:

Ընդուր, որ լրագրումը տպված ա ըլել թե ծեծել են: Լրագրի խոսքը թողանք, մարդկանց հավատա՞նք, տպած խոսքը սո՞ւտ կըլի:

Գործակալի այս պատասխանը շատ դուր եկավ ինձ: Չնայելով յուր արտաքին կոպտության, երևաց, որ բավական լուսամիտ է նա, որովհետև ճանաչում է տպագրված խոսքի արժանիքը:

Կեցցես, տեր-հայր, մինչև այսօր ես նախապաշարված էի քո վերաբերմամբ, բայց այժմ արդեն տեսա, որ արժանավոր գործիչ ես, ասացի ես:

Խրախուսվելով իմ գովեստից, գործակալը հայտնեց մի խելոք միտք, որը ինձ վրա խորը տպավորություն արավ: «Լուր» ասած բանը նման ա ձյունի կլոնդրակի (գնդակի), որ երեխաները գնդելով դրում են ձյունի վրա, եդո սկսում են թոլ տալ (գլորել), որքան շատ ա թոլ ըլում էդ կլոնդրակը, էնքան էլ ձյունը վրան ավելանում ա, հու ենդուց եդը էնքան մեծանում, որ էլ երեխաները կարում չեն տեղից ժաժ տալ: Ուրեմն, եզրակացրեց գործակալը, մարդիք չպետք ա ձյունը գնդեն, այսինքն ամենափոքր անկարգություն էլ ա անեն, չուն էդ անկարգության լուրն ըստեղից մինչև Թիֆլիս հասնիլը տասն անգամ պտի մեծանա, ոնց որ բնական ա: Մեղավորն էլ պետք ա պատժվի, ոչ թե էն չափով, որ մեղք ա գործել, այլ էն չափով, որ գրված ա լրագրումը:

Բայց տեր-հայր, ձյունի գունդն ուրիշ բան է, չոր լուրն՝ ուրիշ բան, ձյունը գլորվելով կմեծանա, դա բնական է, բայց լուրը պիտի տեղ հասնի ճշտությամբ, առանց մեծանալու, կամ փոքրանալու, նկատեց գործակալին մի նորընծա քահանա, որ կարծեմ, պահպանողականներից էր:

Սխալվում ես, որդի, պատասխանեց գործակալը. ճանապարհ գնալուց լուրն էլ ընենց մեծանում ա, ոնց որ ձյունի կլոնդրակը, այ, մի օրինակ պատմեմ, լսիր: Օղորմած հոգի դեր (տեր) Պուղին մեր գեղի պատվական քահանաներից մինն էր: Մի առավոտ զարթնելով կնկանն ասում ա դերակին, էս գիշեր էրազումս էնքան տանջվեցի, էնքան չարչարվեցի, որ ուզում ի մեռնեմ: Խի՞ , ա դեր, հարցնում ա կնիկը, ընդուր որ, մի ագռավ ծնեցի, ասում ա դերը: Բա՛ քու տունը չքանդվի, ըդենց էլ բան կլի, արմանում ա կնիկը, հու ձեռաց վազում իրենց դրացի Օհանի կնկանը ասում՝ աղջի, Սաբեթ, չե՛ս ասել, մեր դերը էս գիշեր էրկու ագռավ ա ծնել: Վա՜յ, քոռանամ, էդ ի՞նչ ես ասում, ծնկներին տալիս ա Սաբեթը, հու ինքն էլ վազում իրա հարևանի մոտ ասում. Աղջի, Սառումի թոռը, ախր դեր Պուղին էս գիշեր իրեք ագռավ ա ծնել: Էդ ի՞նչ զուլում (պատիժ) ա, ա՛ կնիկ, ասում ա Սառումի թոռը, հու վազ տալի իրա տալի տունը: Սոփի, Սոփի, ասում ա, արմացք բան ասեմ, դեր Պուղին էս գիշեր չորս ագռավ ա ծնել:

«Ինչ գլուխներդ ցավացնեմ, բանը որ հասնում ա քյոխվին դեր Պուղին օխտը ագռավ ա ծնած ըլում: Քյոխվան, իհարկե, իրա գեղի խեր ու շառին հոգատար մարդ, հավաքում ա գեղականը հու գալիս դեր Պուղու մոտ: Ա դեր, էս ի՞նչ զուլում ա հասել մեր գեղին, էդ խի՞ օխտը ագռավ ես ծնել, հարցնում ա նրան: Խեղճ դեր Պուղին մնում ա շվարած:

Էդ ո՞վ ասեց, քյոխվա, հարցնում ա նրան:

Ոնց թե ո՞վ ասեց, սաղ գեղը դրնգում ա (թնդում է),- պատասխանում է քյոխվեն: Հանկարծ դերի միտն ա գալիս իրա երազը, կանչում ա կնկանը հարցնում.

Դերակին, էս ագռավի բանը քեզ եմ ասել, էն էլ ասել եմ թե մի ագռավ եմ ծնել. հմի էս խի՞ էլլիկը (հասարակությունը) ասում ա օխտն եմ ծնել:

Ի՞նչ գիտամ, ես Օհանի կնկան էրկուսն եմ ասել, պատասխանում ա դերակինը:

Բա խի՞ ես երկուսն ասել:

Ընդուր, որ մտածեցի թե մի ագռավ որ ծնել ա, հալբաթ (երևի) մի ճուտ էլ հետը կըլեր:

Այ Օհանի կնիկ. դո՞ւ ինչ ես ասել, հարցնում են նրան:

Ես էլ ասել եմ իրեքն ա ծնել:

Բա խի՞:

Չուն մտածեցի, թե երկու ագռավ որ ծնել ա, հալբաթ նրանց էլ մի ճուտ կըլեր: Եվ ըսենց պատասխանում են բոլորը:

Բանն իհարկե պարզվում ա, բայց էդ օրից խեղճ քահանի անունը մնում ա «օխտը ագռավ ծնող դեր Պուղի»:

Հիմի, ա դեր, դարձավ գործակալը նորընծային, դու ասըմ ես լուրը մեծանալ չի: Էս հլա փոքր գյուղում ա, որ մի ագռավը օխտն ա դառնում, բա լուրը, որ ըստեղից Թիֆլիս գնա, տես քանի անգամ պիտի մեծանա Է՛...

Գործակալի պատմությունը համոզիչ ազդեցություն արավ լսողների վրա, իսկ ինձ, առանձնապես, հիացրեց: Այդ պատճառով ձեռքս պարզելով նրան ասացի. Հայտնում եմ ձեզ իմ անկեղծ համակրությունը Հանի որ դուք էլ մեր բանակից եք, ուրեմն գործենք միասին:

Գործակալը, կարծես, ասածներս չհասկանալով, քաշվելով հարցրեց .

Ձեր պաշտոնն ի՞նչ ա:

Իմ պաշտո՞նը... այդ թող ուրիշներն ասեն, պատասխանեցի ես ժպտալով և համեստությամբ հեռացա:

Բայց որովհետև քայլերս արագ չէի փոխում, ուստի լսեցի, որ տեր Սեղբոսը մի առանձին անկեղծությամբ ասում էր, «Հնձվորի» թղթակիցն է, լուրն էլ դա է հաղորդել:

Գործակալը մի զարմացական բացականչություն արավ և, կարծեմ, տեղն ու տեղը սառեց:

Գ

Հա, դուք կամենում էիք իմանալ, թե ինչպես դարձա ես «Հատուկ» թղթակից, բայց ես միջանկյալ պատմություն արի, հոգ չէ, այդ էլ հարկավոր էր, այժմ կդառնամ բուն խնդրին:

Վերադառնալով տուն, նախ սկսա մտածել այն մասին, թե ի՛նչ լավ բան է շփումն ունենալ հասարակական գործիչների հետ, կարծիքներ լսել, մտքեր փոխանակել կամ չգիտցածը սովորել:

Առաջին գրական երկս «Հնձվորին» ղրկելու ժամանակ խոստովանում եմ, երկո՞ւ թե երեք վայրկյան խղճի խայթ ունեցա, որովհետև մտածեցի, թե արդյո՞ք լավ եմ անում, որ չեղած բանը գրում եմ թե ոչ: Ասենք դա սկի խղճի խայթ էլ չէր, այլ լոկ անփորձության երկյուղ: Իսկ ա՞յժմ, հայ գործակալի բերած օրինակները լսելուց հետո այնպիսի մի անհողդողդ քաջություն եկավ վրաս, որ կարծես պատրաստ էի աշխարհը գլխի վրա շուռ տալու, եղածը չեղած, սպիտակը սև, փոքրը մեծ, կարճը երկար, հաստը բարակ, մի խոսքով, աներևույթը երևութական դարձնելու, միայն թե կարողանայի շարունակ գրել և այդպիսով ծառայել դրականությանը: Օ՛, ի՞նչ ոգևորություն էր այս և ինչ չէ կարող անել մարդ հափշտակության այդպիսի վայրկյաններում: Եվ ես սկսա գրել: Բայց ի՞նչ եք կարծում, ի՞նչ,.. Մի որևէ լո՞ւր. երբե՛ք: Այս անգամվա ոգևորությունը լուրի ոգևորություն չէր, այլ մի ամբողջ թղթակցության, որ գրական աշխարհը հուզեր, կրքեր վառեր, մտքեր բորբոքեր... Այո՛ և ես սկսա գրել, ո՛չ, շարադրել այդ թղթակցությունը: Եվ շարադրում էի, ի՞նչ եք կարծում քանի՞ օր, ուղիղ տասներկու, առավոտից սկսած մինչև երեկո: Առաջին երկու օրը զբաղված էի միայն իմ տետրակից բառեր ու ոճեր քաղելով: Հետո կարգի բերի այն հարցերը, որոնց մասին պետք է գրեի: Ապա սկսա իսկական շարադրությունը, որ ինձանից խլեց ուղիղ հինգ օր. հետո շարադրությանս մեջ զետեղեցի իմ ընտրած բառերն ու ոճերը, վերջն արտագրեցի, օրինակեցի, միով բանիվ դուրս եկավ մի հսկայական աշխատություն: Եվ ուրիշ կերպ էլ չէր կարելի, երբ մարդ մի լուրջ բան է գրում, պետք է լրջորեն էլ պարապե, քննե, հետազոտե, ուսումնասիրե...:

Որովհետև այդ թղթակցությունն ամբողջապես առաջ բերել չէի կարող, ուստի համառոտ հիշեմ, թե ի՞նչ խնդիրներ էի շոշափել դրա մեջ:

Սկզբում հարձակվեցի այն բոլոր ստոր արարածների վրա, որոնք սկսել էին որոնել լուր հաղորդող թղթակցին, ինչպես օրինակ տեր Սեղբոսը և նրա նմանները: Այս պարբերության համար հատկապես իմ ոճերի տետրակից արտագրել էի հետևյալ գեղեցիկ խոսքերը' «Պարոններ, իզուր եք որոնում, կամ հալածում թղթակիցներին, նրանք հանցավոր չեն, որ գրում են ճշմարտությունը, իսկ ճշմարտությունը մի հայելի է, որի մեջ ցոլանում է ձեր պատկերը, հայելին մեղավոր չէ, որ այդ պատկերը նրա մեջ երևում է տգեղ և զզվելի».

Այս կտորն այնքան գեղեցիկ էր, որ ես հինգ անգամ իրար վրա կարդացի:

Հետո սկսա խոսել, «մտրակողական» ուղղության մասին, անվանելով նրան «ժողովրդի փրկությունս»: Եվ այդ անունն արդարացնելու համար առաջ բերի այն հզոր ազդեցությունը, որ արել էր «Հնձվորը», հրապարակ հանելով քահանաների տգեղ արարքը: «Նույնիսկ կղերականությունը չկարողացավ անտարբեր մնալ այդ մերկացումի առաջ և ստիպված էր պատմել հանցավորներին» ասում էի ես: Այս առիթով, սակայն, ես հարձակվեցի սրբազանի վրա, անվանելով անարդար և կողմնապահ, որովհետև իսկական հանցավորներին թողած, նա պատմել էր բոլորովին անմեղ մարդկանց (այս մեկն հո հաստատ գիտեի), և այդ արել էր, ասում էի, այն պատճառով, որ պատմվողները սրբազանի հետադեմ ուղղության կուսակից չէին: (Մյս մասին թեպետ խոսք չէր եղել իմ ու տեր Սեղբոսի մեջ, այսուամենայնիվ ես պիտի գրեի, որովհետև իբրև թղթակից պարտավոր էի կատարված իրողության իսկական պատճառները հետազոտել, գտնել)... :

Չխոսելով այլևս մյուս հարցերի մասին, այսքանը միայն կասեմ, որ թղթակցությունս այնքան գեղեցիկ էր դուրս եկել, որ նա, մինչև անգամ, նմանվում էր իսկական թղթակցության: Հենց այս պատճառով էլ սիրտ արի նրա վերջում ավելացնելու իմ անձի վերաբերմամբ հետևյալ տողերը.

«Հանձն առնելով թղթակցի պատասխանատու պաշտոնը, մենք դրանով նպատակ ունինք ծառայել հասարակության իսկական շահերին: Մեր պարտքը կլինի ամեն մի դեպքում պաշտպանել արդարությունը, ճշմարտությունը, գեղեցիկը և բարին, իսկ իրավունքը՝ հալածել ու հարվածել անարդարությունը, սուտը, տգեղը և զզվելին»:

Այս ամենից հետո առաջ էր գալիս ստորագրության խնդիրը: Եթե իմ գրածների տակ դնեի միշտ իմ անունն ու ազգանունը, որ էր Հովսեփ Ավետիսյան Օհանյանց, դա շատ երկար կլիներ, և բացի այդ, ես կարող էի հաճախ ենթարկվել հարձակումների, կամ հրավիրվել դատարան: (Չէ՞ որ իբրև իմ կոչման հավատարիմ թղթակից, ես չէի կարող միշտ ճշմարտություններ գրել, մի տեղ որ ուղղություն կա, բանակ կա, կուսակցության շահեր կան, մի՞թե կարելի է միշտ ճշմարտություն խոսել): Այդ պատճառով էլ որոշեցի ընտրել մի կեղծ անուն: Բայց թվելով մի քանի տասնյակ բառեր, օրինակ՝ Բեեղզեբուղ, Որոմնացան, Սանտարամետ, Մտրակահար, Հառաջադեմ և այլն, տեսի, որ դրանք բոլորն էլ թեպետ գեղեցիկ, բայց երկար բառեր են: Ես կամենում էի կարճը և քաղցրահնչյունը: «Արի իմ անվան, հորանվան և ազգանվան գլխատառերն իրար մոտ դնեմ և տեսնեմ, թե ի՞նչ դուրս կգա», մտածեցի ես. և այդպես էլ արեցի, դուրս եկավ ՀԱՕ, որը ոչինչ չէր նշանակում: Բայց որովհետև պապիս անունն էլ Կարապետ էր, ուստի երբ նրա գլխատառն էլ մեջը դրի, դարձավ ՀԱԿՈ: Ի՛նչ գեղեցիկ ու հրաշալի բառ, բացականչեցի ես և այդ անունով էլ թղթակցությունս կնքելով ուղարկեցի «Հնձվորին»:

Անցավ տասն օր: Տասը դժվարատար, հույսով, ցնորքով և հուզմունքով լի օրեր... Անցուցե՞լ եք դուք երբևիցե այդպիսի օրեր... Իհարկե ոչ: Այդ ծանր, թեթև, քաղցր և դառն, միշտ տանջող և միշտ հաճելի օրերը միայն մեզ՝ գրականության մշակներիս է վիճակված... Այո՛, գրել, ստեղծագործել և սպասել, որ այդ ստեղծագործությունը լույս տեսնե, մտքեր ու սրտեր հուզե, կարծիքներ ծնեցնե, վեճեր հարուցանե և ստեղծագործողի անունը փառավորե կամ . . . , խայտառակե: Վերջին բառն, իհարկե, ինձ չէ վերաբերում, բայց լինում են նաև այդպիսի դժբախտներ, մուսաներից ատված մարդիկ, որոնք գրում, կամ, իրենց կարծիքով ստեղծագործում են և վերջը խայտառակվում: Բայց թողնենք այդ դժբախտներին:

Տասն օր անցավ: Ստացվող «Հնձվորում» չէր երևում իմ թղթակցությունը, սկսում էի հուսահատվել... Հեշտ բան չկարծեք նստել 12 օր, գրել, շարադրել, միևնույն բանը տասն անգամ օրինակել և վերջը նրա տպագրությունը չտեսնել... Օ դա զարհուրելի է... Բայց ինչպես երևում է, ինձ ոգևորող մուսան հսկում է եղել թղթակցությանս: Տասն և մեկերորդ օրը, այո , ճիշտ այդ օրը... բայց ոչ,

նկարագրեմ, թե ի՞նչ օր էր այդ. Պայծառ և գեղեցիկ, արևն առավոտը ծագել էր, իսկ երեկոյան պետք է մայր մտներ, հետո լուսինը պիտի ծագեր, մարդիկ և անասուններ եռանդով գործում էին. թռչունները երգում, բույսերը բսնում և ծաղիկները ծաղկում... դրանից կարող եք երևակայել, թե ի՞նչ հրաշալի օր էր այն: Եվ ահա, այդ հրաշալի օրը ստացա «Հնձվորի» մի համար: Տենդային հուզմունքից դողացող ձեռքերով բացի թերթը: Առաջին երեսում ոչինչ չկար, իսկ երկրորդում... Տեր աստվա՛ծ. մի՞թե ճշմարիտ էր. աչքերիս չէի ուզում հավատալ... Այդտեղ, այդ երկրորդ երեսում տպված էր, բայց ոչ, լույս էր տեսած, կամ ավելի ճիշտ ասած հրատարակված էր իմ թղթակցությունը . . . : Առաջին անգամ, որ աչքս ընկավ ՀԱԿՕ-ի վրա, քիչ էր մնում, որ ուրախությունից խելագարվեի... ուրեմն դա երազ չէր և ոչ էլ ցնորք: Այո' դա իմ թղթակցությունն էր տպված հայոց ազգի պարծանք «Հնձվորում»: Եվ ես սկսա կարդալ: Բայց, ո՛վ զարմանք, ուրախությունն այնքան էր շշմեցրել ինձ, որ ամենից կարևորը, իմ ներկան ու ապագան փառավորողը դեռ չէի տեսել: Իմ հոդվածի սկզբում, «Նամակ խմբագրության» վերնագրի տակ, փակագծի մեջ նոտր գրերով տպված էր «Հատուկ թղթակցից»... Հասկանո՞ւմ եք, հատուկ թղթակցից, ուրեմն ես, Հովսեփ Ավետիսյան Օհանյանցս, կամ ըստ անվանակոչության Հ ա կ օ-ս, «Հնձվորի» «հատուկ», կամ որ նույնն է ասել «պաշտոնական» թղթակիցն էի: Եվ այս պատվաբեր կոչումը ոչ մի մահկանացու չէր կարող այլևս խլել ինձանից, որովհետև դա արդեն հաստատված, սրբագործված էր տպագրված տառերով ճշմարտության պաշտպան և ընդհանուր աշխարհին հայտնի «Հնձվոր» լրագրում... Ընդհանուր աշխարհին հայտնի եմ ասում, որովհետև նրա ճակատին պարզ գրած էր թե «արտասահմանից մեզ դիմում են հետևյալ հասցեով Tiflis, Rédaction «Hindzvor». կնշանակե արտասահմանում նա հայտնի էր ամենքին: Այդպիսով, ուրեմն, ես էլ դառնում էի աշխարհահռչակ, իմ անունն էլ այնուհետև պիտի կարդացվեր ոչ միայն Կովկասում ու Ռուսաստանում, ,այլև Եվրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում և Ավստրալիայում...

Վերջապես այդպիսի հուզումների և հոգեկան ամենաքաղցր զրգիռների ազդեցության տակ ես կարդացի իմ թղթակցությունը մի քանի անգամ, հիացա, հափշտակվեցի և ապա «Հնձվորը» սրտագին համբուրելով դուրս եկա տանից:

Հասած լինելով արդեն այսպիսի բարձր աստիճանի, ես, իհարկե, պիտի աշխատեի այնուհետև հեռու պահել ինձ հասարակ ամբոխից և գտնվել մշտապես որոշ բարձրության վրա: Բայց մինչ այդ դեռ հարկավոր էր իմանալ, թե ի՞նչ ընդունելություն է գտել իմ հոդվածը քաղաքի մեջ, կամ ի՞նչ ազդեցություն է արել նա ընթերցող հասարակության վրա:

Այդ վայրկենին, որ ոտքս դրի քաղաքի հրապարակում, ինձ այնպես թվաց, թե բոլոր մարդիկ աչքերնին սևեռեցին ինձ վրա, իսկ շատերը նրանցից հարգանքով բարևեցին: Ես, իհարկե, չնայեցի ոչ ոքին և առաջ էի դնում հաստատուն քայլերով ու «հատուկ թղթակցին» վայել լրջությամբ:

Օրը տոն լինելով՝ դպրանոցի վարժապետական խումբն ևս այդտեղ էր: Ես, իհարկե, միայն դրանց կարող էի մոտենալ, իբրև փոքր ի շատե ինտելիգենտ մարդկանց: Իմ ողջույնին ամենքը պատասխանեցին սիրով և քաղաքավարությամբ: Իսկ իմ հարցին թե՝ ի՞նչ նոր լուր կա, Ճաճուռյանն ասաց.

Լուր չէ, այլ մի ամբողջ պատմություն... «Հնձվորի» այստեղի թղթակիցը գլխի վրա է դրել ամբողջ քաղաքը:

Ինչպե՞ս, ի՞նչ է գրել, հարցրի ես կեղծ անգիտությամբ:

Օ, պետք է կարդաք, բառերով պատմել անկարելի է:

Այսուամենայնիվ:

Ասում եմ անկարելի է, է՛լ թղթակից պտրողներ, էլ առաջնորդ, է՛լ քահանա, է՛լ կուսակցական անարդարություն և այլն, և այլն չէ մնացել, բոլորն հրապարակ են հանված:

Եվ լավ է գրված:

Փառավոր. «հատուկ թղթակցի» գործ է:

Ուրախ եմ, որ հավանում եք, ասացի ես ժպտալով, Ճաճուռյանն իսկույն բռնեց ձեռքս և քաշելով ինձ մի կողմ, հուզված ձայնով հարցրեց.

Մի՞թե դուք եք գրողը:

Ես զարմացա նրա նուրբ հոգեբանական ընդունակության վրա:

Ինչո՞ւ համար եք այդպես կարծում հարցրի ժպտալով:

Օ՛, մի ծածկեք, խնդրում եմ, հայտնեցեք ինձ ճշմարտությունը, ես գաղտնապահ կլինեմ այնպես, ինչպես գերեզմանի քարը՝, որ ոչ ոքի չի ասում, թե ո՞վ է յուր տակ պառկած:

Ա՛ս . . . կամաց խոսեցեք, ի սեր աստծո, զգուշացրեցի ես: Ուրեմն, սիրելի բարեկամ, այդ դուք եք, դո՛ւք...

Այո՛, ինչո՞ւ ծածկեմ լավ բարեկամից... Բայց, խնդրում եմ՝ թող ոչ ոք այլևս չիմանա այդ:

Բայց ախր դուք . . . ներողություն...

Ինձ թվում էր, թե նա կամենում էր ասել՝ «ախր դուք այնքան մտավոր պատրաստություն չունեք». բայց իմ աչքերի խիստ հայացքը զգաստացրեց նրան, ուստի խոսքը փոխելով հարցրեց.

Բայց ախր այդ ի՞նչ անուն է, որ ընտրել եք:

Հովսեփ Ավետիսյան Կարապետյան Օհանյանցի գլխատառերը միացրեք դա կլինի՞...

Ճաճուռյանը մի փոքր մտածեց և ապա հանկարծ բացականչեց:

Հակո:

Բայց հենց այդ բառն էր, որ կարողացավ արտասանել և ապա ամոթից շառագունվեց, որովհետև զգաց, որ մեծ անքաղաքավարություն է արել կասկած հայտնելով իմ մտավոր պատրաստության մասին:

Ներողություն, սիրելի պարոն Հակօ, եթե ես վիրավորեցի ձեզ, ասաց նա անկեղծ զղջումով:

Հ ա կ օ անունս առաջին անգամ լսելով կենդանի բարբառով խոսողից, այնպիսի մի քաղցր հաճույք զգացի, որ իսկույն էլ ասացի Ճաճուռյանին կատարյալ ներողամտությամբ.

Անհոգ կացեք, բարեկամ, այսուհետև այլևս ես սրտիս չեմ առնիլ ոչ մի վիրավորանք: Մի անգամ, որ հրապարակախոսությունն ընտրել եմ իմ գործունեության ասպարեզ, ես պիտի աշխատեմ սովորել համբերություն: Ես պատրաստ պիտի լինիմ թե՛ վիրավորանքի և թե՛ հալածանքի, այդ դեպքում, անշուշտ, ինձ կմխիթարեն և կոգեվորեն մեծ հրապարակախոսների օրինակները:

Անշուշտ, անշուշտ, պատասխանեց Ճաճուռյանը խորին ակնածությամբ: Ես կրկին զգուշացրեցի նրան ոչ ոքի չհայտնել Հակօ-յի ով լինելը և հեռացա:

Բայց, բարեբախտաբար, «ոչինչ է ծածուկ որ ոչ յայտնեսցի»: Ճաճուռյանն այս մասին հայտնել էր Մոճոռյանին, Մոճոռյանը՝ Չանչուրյանին, Չանչուրյանը՝ Չանգուրյանին և այդպիսով մի շաբաթից հետո արդեն բոլոր քաղաքը գիտեր, որ ես եմ Հ ա կ օ ն , «հատուկ թղթակիցն» ազատամիտ «Հնձվորի»:

Դ

Այժմ այլևս ավելորդ է թվել, թե ի՞նչ նյութերի մասին եմ գրել ես իմ երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն և այլն նամակներում: Այդ երջանիկ օրերից սկսած մինչև այսօր անցել են շատ տարիներ և այդքան ժամանակի ընթացքում «Հնձվորում» հրատարակված իմ թղթակցությունների մեջ ես շոշափել եմ հարյուրավոր ու հազարավոր հարցեր: Այդ ամենի մասին հիշել անկարելի է: Այսքանը միայն կասեմ, որ իմ հրապարակախոսական գործունեության ընթացքում հետևել եմ միշտ մի ազնիվ սկզբունքի, այն է՝ խոսել ու գրել ճշմարտությունը, և միայն ճշմարտությունը: Բայց, իհարկե, ոչ այնպես, ինչպես որ նա կա, (այդպես կարող է անել ամեն մի տիրացու), այլ այնպես, ինչպես որ պիտի լինի, որովհետև ա՛յդ է պահանջում կուսակցական ճշմարտության էտիկան, որն ուսումնասիրել և

յուրացրել եմ շարունակ «Հնձվորի» գոհարները կարդալով և նրա ուղղության գաղտնիքը վերլուծելով:

Այս իսկ պատճառով ամեն մի թղթակցություն շարադրելիս աչքիս առաջ եմ ունեցել հայր գործակալի «ձյունի կլոնդրակը» և «օխտը ագռավ ծնող տեր Պուղու» պատմությունը, Դրանք, այո, եղել են ինձ համար լուսատու փարոսներ իմ հրապարակախոսական նավի հորձանուտ ճանապարհի վրա և դրանց եմ պարտական գրական ասպարեզում ձեռք բերած իմ հաջողությունն ու հռչակը: «Հատուկ թղթակցի» գործունեության ասպարեզը մանավանդ այն թղթակցի, որ կոչումն ունի ազատ, մտրակող և մերկացնող ուղղությանն հետևելու, չափազանց ընդարձակ է և շնորհակալ: Գավառի մեջ, մանավանդ, այդ կոչման հետ կապված են որոշ իրավունքներ, որոնցից թղթակիցը կարող է օգտվել ինչպես և ինչ չափով որ կամենա: Բավական է, որ նա յուր ձեռքին ունի մի դրոշակ, որի վրա գրված են հետևյալ վեհ խոսքերը, «ազատամտություն», «նոր և թարմ հոսանք», «հարվածել ու մտրակել», «կորչի խավարը և հետադիմությունը», «ատում ենք կղերականներին», «ով որ մեզ հետ չէ, մեր դեմն է»: Այլև մի բառարան, որ յուր մեջ ունենա 500-ից մինչև 1000, կամ առավելն 2000 ընտիր, բայց, միևնույն ժամանակ ազդու հայհոյանքներ, համեմված հարձակողական և մտրակողական դարձվածքներով, որոնք որչափ հանդուգն լինեն ու սանձարձակ, այնքան ավելի լավ, որովհետև ինչպես գիտեք, քացախի թունդն է լինում հարգի:

Եվ ահա՛ այդ գեղեցիկ ուժերով զինված, դուք մտնում եք... բայց ոչ, այստեղ մի փոքր պիտի շեղվեմ:

Հայոց ազգը հո գիտե՞ք ինչ ազգ է: Երևելի ազգ է. ամեն բան ունի: Ամենից առաջ ունի մի ազգային եկեղեցի, որ թեպետ մի փոքր հետադեմ է, բայց վնաս չունի за то շատ հին է: Նրա գոյությունն, ասում են, Քրիստոսից շատ առաջ է. հիմնված, չգիտեմ, Բագրատունյաց ո՞ր թագավորի ժամանակ: Թվականը չեմ հիշում: Ես, առհասարակ այդպիսի սխոլաստիկական խնդիրներով չեմ զբաղվում: Ճշմարիտն ասած նոր սերնդին չի էլ սազում վատնել ժամանակն այդպիսի դատարկ բաների վրա: Այսքանը միայն գիտեմ, որ նա շատ հին է, և ինչպես «Հնձվորն» էլ ասում է ունի ժողովրդական ոգի, արի պատճառով էլ կատարում է

ժողովրդական ընտրություններ, ինչպես օրինակ, քահանայի, երեցփոխանի, հաշվատեսի, պատգամավորի և այլն:

Հայոց ազգն ունի, նաև, հոգևոր դպրոցներ, որոնց մեջ դասախոսում են վարժապետներ. իսկ վարժապետներին ընտրում է տեսուչը, տեսչին հոգաբարձուները, հոգաբարձուներին ժողովուրդը , իսկ ժողովրդին... հա՛, ներողություն, դենը ճանապարհ չկա: Հայոց ազգն ունի հոգևոր ատյաններ, որոնք կառավարվում են անդամներով, իսկ անդամներին կառավարում է առաջնորդը, առաջնորդին կաթողիկոսը, կաթողիկոսին... Այստեղ էլ, կարծեմ, ճանապարհը փակ է, բայց սազում է, որ ասեի «իսկ կաթողիկոսին՝ ժողովուրդը»:

Վերջապես հայոց ազգն ունի բարեգործական ընկերություններ, որոնք կառավարվում են վարչություններով, իսկ վարչությունը բաղկացած է անդամներից ու նախագահից, որոնց, ինչպես գիտեք, ընտրում է ընդհանուր ժողովը, իսկ ընդհանուր ժողովը կազմվում է անդամներից, որոնք, բոլորն էլ, ժողովրդական ոգի ունին, որովհետև աշխարհականների որդիք են: (Միջանկյալ պիտի ասեմ, որ դրանք միակ հաստատություններն են, որոնք ազատ են կղերական տարրից և նրանց ազդեցությունից, դժբախտաբար դրանք էլ այն վատ կողմն ունին, որ ընդունում են հետաղեմ անդամներ, որոնց հետ երբեմն ստիպված ենք լինում ընդհարվիլ):

Ահա՛, այս բոլոր տեղերն ու հաստատություններն, որոնք ժողովրդական ոգու արտադրություններն են, կազմում են «հատուկ թղթակցի» գործունեության ասպարեզը:

Հիշածս դրոշակը ձեռքիս և բառարանը կռանս տակ ես մտնում եմ այդ ասպարեզներից որը կամենում եմ, որովհետև իմ առաջ բաց է ամեն դուռ, եկեղեցո՞ւ լինի այդ թե՛ դպրոցի, առաջնորդարանի՞ լինի թե բարեգործական ընկերության, միևնույն է. ամեն տեղ էլ ես մտնում եմ ազատորեն, ինչպես որ կմտնեի իմ հոր տունը կամ իմ պապի բախչեն:

Առաջին անգամ, որ կոխում եմ դռան շեմքը, մի թեթև հազում եմ: Ներկա եղողներն իսկույն նայում են ներս մտնողին և զգաստ դիրք ստանում: Այդ ժամանակ արդեն ես գլխարկս հանում եմ: Իբրև ծայրահեղ առաջադիմական, ես

այդ անում եմ մի քանի քայլ դահլիճում առաջ գնալուց հետո: (Հետադիմականներն, ընդհակառակը, գլխարկները հանում են նախասենյակում, որ նշան է նրանց երկչոտ և նվաստոգի լինելուն): Իսկույն մի խուլ շշուկ տարածվում է ժողովրդի մեջ: Լսվում են հարցեր. «ո՞վ է սա» և պատասխաններ. «Հնձվորի» թղթակիցը , կամ «պարոն Հակօն»: Ես, իհարկե, այդ վայրկյանին դիմում եմ դեպի իմ աթոռը, գլուխս վեր բռնած, կուրծքս դուրս ցցած և կարելվույն չափ սիգաճեմ: Զգում եմ, որ նախագահն ու վարչության անդամները հետևելով իմ քայլերին՝ կամենում են ինձ ողջունել: Բայց ես անցնում եմ առանց նրանց նայելու, լուռ և իբր թե մտախոհ:

Նստում եմ վերջապես «հատուկ թղթակցի» աթոռին: Եվ թեպետ չգիտեմ, թե ինձանից առաջ ի՞նչ են խոսել, կամ ի՞նչ հարցեր շոշափել, ասյուամենայնիվ տեսնելով, որ շատերը մատներնին բարձրացրած խոսք են ուզում նախագահից, ես էլ բարձրացնում եմ ցուցամատս, որպեսզի հասկացնեմ ժողովին, թե «մենք էլ այստեղ ենք»:

Նախագահն իսկույն գլխով է անում, որ կնշանակե թե՝ «ձեր խոնարհ ծառան եմ», ես սպասում եմ:

Այդ միջոցին խոսողը մի պահպանողական է, բայց ես նրան չեմ լսում, որովհետև իրավունք չունիմ լսելու: Գուցե նա խոսում է լավ բաներ, գուցե շատ էլ խելոք մարդ է, բայց քանի որ, պահպանողական է, այդ արդեն բավական է, որ ես համոզվեմ, թե նա լավ բան ասել չէ կարող: Եվ հենց այդ պատճառով էլ, բոլոր ժամանակ, որ նա խոսում է, ես ազատամիտ մարդուն վայել անհամբերությամբ, ծամածռություններ եմ անում, որով բոլոր դահլիճն հասկանում է, որ Հակօն դեմ է խոսողին: Այդքանն արդեն բավական է, որ ճառախոսը ոչ մի սպիտակ քվե չստանա, եթե. հավակնություն է ունենալու յուր տուփը դնելու:

Ա՛յ, ուրիշ բան է հաջորդ ճառախոսը. նա ազատամիտ Ճաճուռյանն է: Եվ չնայելով, որ չգիտեմ թե ի՞նչ պիտի խոսի, այսուամենայնիվ, ես լիովին համաձայն եմ նրա հետ: Որովհետև հաստատ գիտեմ, թե ինչ էլ որ խոսի, հարմար պիտի լինի մեր ուղղությանը: Մի փոքր անցնում է թե չէ, գուշակությունս կատարվում է. նա հայտնում է հրաշալի մտքեր. ամենն էլ առաջադիմական, ես նրան ծափահարում եմ, ինձ ձայնակցում են մեր ընտիր համախոհները: Շուտով

հերթը հասնում է ինձ, թեպետ ես այդպես շուտ չէի սպասում... Բայց որովհետև նախագահը մեր բանակից է, ուստի կուսակցական քաղաքականության էտիկետը պահպանելով ինձանից առաջ ձայն խնդրողներին նա թողնում է անուշադիր և սիրալիր ժպիտով դառնում է դեպի ինձ.

Պարոն Հակո, այժմ խոսքը ձերն է:

Ես, սկզբում, իհարկե, մի փոքր շփոթվում եմ, որովհետև, խոստովանանք լինի, խոսելու մի առանձին շնորհք չունիմ, բացի այդ, այն վատ սովորությունն էլ ունիմ, որ ցուցամատս բարձրացնելու միջոցին, որոշած չեմ լինում թե ի՞նչ պիտի խոսեմ: Իսկ այժմ քանի որ հերթը հասել է ինձ, իբրև «հատուկ թղթակից» պետք է արժանապատվությունս բարձր պահեմ, ուստի բոլորովին ինձ չկորցնելով բարձրանում եմ աթոռից և մի բարձրահոն հայացք ձգելով ժողովականների վրա, պարզ և մեկին արտասանում եմ հետևյալ համառոտ, բայց բազմաբովանդակ ճառը.

Պարոն նախագահ, պատիվ ունիմ հայտնելու հարգելի հանդիսականներին թե ես, իսկապես, կամենում էի ասել այն, ինչ որ պարոն Ճաճուռյանն ասաց . ես լիովին համաձայն եմ պարոնի հայտնած մտքերի և կարծիքների հետ:

Այս խոսքերը խոր տպավորություն են անում ժողովի վրա:

Դուք հիմա կասեք թե «հատուկ թղթակցին» չի վայելիլ այդքան համառոտախոս լինել: Ես կպատասխանեմ, որ սխալվում եք: Հատուկ թղթակիցն ավելի պարտավորություն էլ չունի խոսելու: Ով ուզում է թող խոսի, ճառեր արտասանե, ընտրություններ կատարե, այսուամենայնիվ, այդ բոլոր խոսքերի, ճառերի և ընտրությունների նկատմամբ հրապարակով վերջին կարծիք հայտնելը մեզ է պատկանում:

Եթե ճառախոսը «մեր մարդն» է, ես նրա հայտնած մտքերն ու կարծիքները «Հնձվորում» անվանում եմ «բարձր, վսեմ և գաղափարական», եթե հակառակորդ է, ասում եմ՝ «հետադիմականին մեկն այսինչ ժողովում հայտնեց անդրջրհեղեղյան, բորբոսնած մտքեր»:

Եթե ժողովի ընտրությունները կատարվում են համաձայն մեր ցանկության, այն ժամանակ ես հայտնում եմ, թե «այսինչ ընդհանուր ժողովը կայացավ ամենայն օրինավրությամբ և ընտրության արդյունքը եղավ փայլուն, որովհետև ընտրվեցան միայն առաջադիմականները: Բայց, եթե դրանց մեջ ներս է ընկնում մի պահպանողական, այն ժամանակ արդեն ասում եմ. «թեպետ ժողովը կանոնավոր եղավ, բայց վերջում խավարամիտները քվեները խարդախելով և մի քանի ժողովականների միամտությունը շահագործելով ընտրել տվին իրենցից մինին»:

Պատահում է, իհարկե, և ժողով, ուր բոլոր ընտրվածները լինում են պահպանողականներ: (Այդպիսի դժբախտություն հասել է հայոց ազգին մի քանի անգամ): Եվ այդպիսի ժամանակ ես այլևս չեմ քաշվում զուտ ճշմարտությունը հայտնելու. ժողովն, ուղղակի, հայտարարում եմ. «ապօրինի», ընտրությունները՝ «անվավեր», իսկ ժողովատեղը՝ «Արշակավան»:

Այս եղանակով ես գործում և ճշմարտությունը հայտնում եմ, նաև, պատգամավորական, հոգաբարձական և երեցփոխական ընտրությունների վերաբերմամբ:

Եթե պատգամավորը «մերոնցից է», ես նրան ուղղակի անվանում եմ «սուրբ գործի համար յուր անձն ու հոգին նվիրող»: Եթե «մերոնցից» չէ, տալիս եմ նրան յուր սեփական անունը, այն է՝ «պնակալեզ և ստրկահոգի կղերական»:

Եթե հոգաբարձուն «մեր բանակիցն է», ես չեմ ծածկում նրա արժանիքը. հայտնում եմ, որ դա անզիվ ու ազատ գաղափարներով տոգորված, դպրոցի, առաջադիմության նախանձախնդիր և հանճարավոր ուղեղի տեր մեկն է»: Բայց եթե «հակառակորդ բանակից» է, նրա թերությունները պարզ է. նա «կաշառակեր է, անբարոյական և Մաթուս աղայի ժամանակակից գաղափարներով սնված»:

Եթե երեցփոխը «մեր մարդն» է, նրա նկատմամբ կատարում եմ իմ պարտքը, հայտարարելով նրան «անբիծ, անշահասեր, վերին աստիճանի բարեպաշտ և աստծու տան օգտին յուր անձը նվիրող», իսկ եթե «մեր մարդը չէ», այն ժամանակ, ինչ ասել կուզի, որ քաղաքացիական քաջություն պիտի ունենամ անվանելու նրան «գող, ավազակ, եկեղեցու գույքը հափշտակող» և այլն ըստ

կարգին: Գալով վարժապետներին, տեսչին, առաջնորդին և այլն, դրանք գործունեության նկատմամբ ես հետևում եմ միևնույն հաստատուն ուղղության, մնալով միշտ ազատասեր, ճշմարտախոս, մերկացնող, հարվածող-մտրակող, միով բանիվ զտարյուն «հնձվորական»:

Այս էլ պիտի ասեմ, որ «հատուկ թղթակցի» գործունեությունը չի սահմանափակվում միայն ազգային հաստատությունների մասին գրելով: Ոչ, գավառական քաղաքում ուրիշ բաներ էլ կան, որոնցով մենք հետաքրքրում ենք լրագրի ընթերցողներին: Կա, օրինակ, քաղաքագլուխ, կան վարչության անդամներ, ինքնավարական իրավունք, հետո՝ քաղաքի մաքրության, բարեկեցության և առողջապահության վերաբերյալ խնդիրներ. կա՛ն կապալառուներ, վաշխառուներ, վաճառականներ և այլն: Այս բոլորի մասին նույնպես ես իրավունք ունիմ գրելու: Եվ գրում եմ, իհարկե, այն ինչ որ կամենում եմ, կամ ինչ որ պահանջում է կուսակցությունից անբաժան իմ անհատական շահը:

Կար ժամանակ, երբ թղթակիցներից պահանջվում էր շատ քիչ բան. այն է չինել լոկ արձանագրող որևէ գործի կամ դեպքի: Այդ նահապետական ժամանակի թղթակիցը կարող էր, ուրեմն, լինել և սահմանափակ խելքի ու զարգացման տեր մեկը, և նա, համենալն դեպս, կգոհացներ յուր ընթերցողներին: Բայց այժմ այդպես չէ: Այն օրից, որ հայ ազգի կյանքը բարդացավ և նրա մեջ ծնունդ առին ազատամտական, առաջադիմական և մտրակողական ուղղություններն, այն օրից, երբ լույս աշխարհ հանվեցան խավարում ծածկված պահպանողականները, հետադիմականները և կղերականները, մերկացնող ուղղության հետևող խմբագրություններն այլևս չեն բավականանում հասարակ տեսակի թղթակցություններով, նրանք պահանջում են, որ «հատուկ թղթակիցն» ունենա ոչ միայն արձանագրելու, այլև հորինելու ու ստեղծելու ձիրք, որ նա կարողանա որևէ անձի գնդած ձյունը գլորել ու թավալել այնքան, որ սա մեծանա, վիթխարի ձև ստանա և տեսնողների վրա ահ ու սարսափ բերե: Կամ, ընդհակառակը, եթե մեկը պատահմամբ շինել է մի մեծ գունդ, հալե ու մաշե նրան այնքան, որ տեղը մնա աննշան մի գնդիկ: Եվ հենց այս պատճառով էլ, եթե առաջ խմբագիրն այնքան երկչոտ ու ամոթխած էր, որ յուր լրագրում որևէ անճիշտ լուր տպված ժամանակ շտապում էր՝ հակառակ կողմից հասած

հերքումը իսկույն տպագրելու, այժմ, ընդհակառակը, խմբագիրն ունի այնքան կորով ու քաջություն, որ ոչ միայն հզոր պաշտպանություն է ցույց տալիս յուր թղթակցին և համառությամբ նրա հաղորդած անճշտությունների վրա պնդում, այլև թղթակցի վարկը ժողովրդի աչքում բարձրացնելու համար, այդ անճշտությունների վրա հիմնված առաջնորդողներ է գրում և յուր խոսքն ավելի ազդու անելու համար թղթակցի ստերից վկայություններ բերում:

Ճշմարիտ է, գավառական քաղաքում գործի իսկության ծանոթ մի քանի մարդիկ վրդովվում են և հայհոյում սխալ տեղեկություններ հաղորդող թղթակցին, բայց դրանից ինչ դուրս կգա. հո մյուս քաղաքներում տասնյակ հազարավոր մարդիկ կարդո՞ւմ են մեր հաղորդածը և ընդունում նրանց զուտ ճշմարտության տե՞ղ:

Տասը-քսան մարդ ճշմարտությունն իմանալով ի՞նչ կարող են անել, քանի որ նրանց հերքումը չի տպագրվելու լրագրում: Տասնյակ հազարավոր մարդիկ մեր շնորհիվ արդեն սևին ասել են սպիտակ և այդ բավական է. ձայն բազմաց՝ ձայն աստուծո:

Հանգամանքների այդպիսի բարեբախտ փոփոխության շնորհիվ է, որ մենք այսօր ոչ միայն մեծ հարգ ու պատիվ ենք վայելում ժողովրդից, այլև կարողանում ենք հեղափոխություններ առաջացնել նրա լճացած ու բորբոսնած կյանքի մեջ:

Հիշենք մի օրինակ:

Քսան տարի սրանից առաջ մի անհեթեթ կարգադրություն եղավ:

Հրամայել էին, որ մեր դպրոցների աշխարհական հոգաբարձուների թվում ընտրվեն նաև երկ-երկու քահանաներ, որոնք, ինչպես գիտենք, զուտ կղերականներ են: Այս կարգադրությունը, ինչպես որ սպասելի էր, հուզեց ու վրդովեց ողջ ազատամիտ աշխարհը: Ո՞նց թե հոգևոր դպրոցների մեջ մուտ գործե հոգևորականը, այս ի՞նչ խավարամտություն է, հարցրինք մենք իրար՝ լցված արդար բարկությամբ:

Բանից երևաց, որ այդ կարգադրությունն արել է հայոց հոգևոր տերը:

Մենք զարմացանք:

«Հայոց հոգևոր տերը ի՞նչ գործ ունի մեր հոգևոր դպրոցների հետ», հարցնում էինք իրար լուռ փսփսալով և սակայն այդ հարցին պատասխան չէինք գտնում:

Հանկարծ բարեկամներիցս մեկը մի զարմանալի միտք հայտնեց.

Հայոց հոգևոր տերը, ասաց նա, երևի այն կարծիքի է, թե՝ քահանաները ևս հայեր են: Իսկ նրանց որդիքը, որ փարաջա չեն հագնում, աշխարհականներ: Հետևապես, ինչպես որ գդակակար Մակին, կամ բազազ Սերոբը աշխարհական լինելով իրավունք ունին հոգաբարձու ընտրվելու, և իրենց որդվոց շահերը դպրոցում պաշտպանելու, այնպես էլ քահանան, հայ անվանելով իրեն, պիտի խառնվի հոգևոր դպրոցի գործերում, առարկելով թե պաշտպանում է այդտեղ յուր աշխարհական որդու շահերը:

Ո՛չ, այդպես չէ, հարեց մի ուրիշը, որովհետև մենք, աշխարհականներս, ամեն կերպ խառնվում ենք եկեղեցու գործերում, առարկելով թե մեր եկեղեցին ժողովրդական է ահա, հոգևոր տերն էլ քահանաներին խառնում է մեր հոգաբարձուների հետ, որպեսզի մի օր ասե. թե՝ դպրոցներն էլ հոգևորական են:

Այս տարօրինակ, բայց կարի հավանական բացատրություններն ուղեղս ցնցեցին: Սկսա մտածել, թե ի՞նչ միջոց գործ դնենք ծնունդ առած չարիքն արմատախիլ անելու:

Եվ ահա հանկարծ գլխումս ծագեց մի հրաշալի միտք, որը ես դարձյալ վերագրեցի մուսաների ազդեցության: (Միջանկյալ պիտի ասեմ, որ վերջին ժամանակներս մուսաները շուտ-շուտ են երևում մեր երկրում: Ասում են բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էլ ջրի վտակում մի մուսա է բռնել: Բայց խավարամիտ հետադիմականը փոխանակ նրանից շնորհ խնդրելու, փող է ուզել, մուսան էլ փասա-փուսան հավաքել, փախել է): Հա, այն էի ասում. գլխումս մի հրաշալի միտք ծագեց: Կղերական կուսակցությունից և նրա ազդեցությունից ընդմիշտ ազատվելու համար պետք է հեռացնենք եկեղեցիներից բոլոր քահանաներին, իբրև հայ ազգին չպատկանող մի տարրի մտածեցի ես:

Եվ երբ այս մասին հետևյալ օրը հայտնեցի պատգամավորների նախապատրաստական ժողովում, բոլոր առաջադիմականները միանվագ

ծափահարեցին: Բայց հետադիմականներն սկսան ծիծաղել: Եվ զարմանալի էլ չէր: Այդ մարդիկ չեն կարող որևէ թարմ ու նոր միտք ըմբռնել ու մարսել. նրանց հետաքրքրում է միայն հինն ու փտածը: Այդ պատճառով էլ խավարասերներից մեկը հետևյալ տղայական դիտողությունն արավ.

Հապա այն ժամանակ ո՞վ մեզ համար ժամ ասե, ով մեր երեխան մկրտե, պսակը կատարե, մեռելը թաղե:

Արևը սիրեմ Ճաճուռյանին, վեր թռավ տեղից կրակի պես ու պատասխանեց.

Դրա համար Ամիրխանյան կա. բավական է այսօր քաշել մի հեռագիր և վաղը պատրաստ կլինին այնտեղ մի քանի տասնյակ պաստորներ, բոլորն էլ բրյուկով ու ժիլետով:

Հետադիմականն, իհարկե, իսկույն պապանձվեց: Բայց և այնպես իմ առաջարկությունը չընդունվեց, որովհետև խավարամիտները քվեները խարդախեցին:

Այնուամենայնիվ, կղերականներից ազատվելու համար, մենք գործ դրինք ավելի ազդու և դրական միջոց: Մի երեկո հավաքեցինք քաղաքի քահանաներին մեր տանքը և ասացինք .

Տեր-պապաններ, դուք ստամոքս ունի՞ք թե ոչ, ասացին: Ունինք:

Դուք սիրո՞ւմ եք թաժա հաց, յուղալի բոզբաշ, անուշահոտ տոլմա, կամ դավուրմով փլավ, ասացին.

Շատ ենք սիրում:

Դուք կարո՞ղ եք տկլոր ման գալ ձմեռ ժամանակ, կամ սենյակներդ չվառել, երբ բուք ու բորանը սառեցնում լինի դրսում ամեն կենդանի շունչ:

Ո՛չ, ասացին, չենք կարող, տկլոր ժամանակ մեզ հարկավոր է լավ քաթանից շապիկ ու շապկի ընկեր. հաստ գուլպա և պոլսապոժկա. հետո դրաբի շալվար և արխալուղ, վերջը մի կապա, մի փարաջա, մեկ էլ մի վերարկու-փարաջա, այդ

բոլորից հետո էլ մանիշակագույն թավշից մի կամիլավկա: Իսկ եթե դրան արժանացած չլինինք, այն ժամանակ Հաբիքի կաստորից մի լավ շլյապա: Գալով մեր սենյակները տաքացնելուն, դրա համար էլ հարկավոր է չորս խորանարդ սաժեն իսկական բոխի ծառի փայտ:

Դե, լույս դառնա ձեր հերը, ասացինք մենք, հիմա լսեցեք . եթե չեք ուզում, որ թաժա հացը, բոզբաշը, տոլման, դավուրմով փլավը, կամ վարդագույն իշխան ձուկն անպակաս լինին ձեր սեղանից, եթե չեք ուզում տկլոր ու չփլախ ման գալ փողոցում, կամ ձմեռ ժամանակ ցրտից գոնգոռնալ, այն ժամանակ պետք է քիթներդ չերևցնեք հոգաբարձուներ ընտրող վաղվա ժողովի մեջ: Հակառակ դեպքում, մենք ձեր ծխականները չենք, դուք էլ մեր քահանաները:

Հարվածն ուղղված էր վերքին, քահանաները մնացին սառած:

Մեկը միայն առաջ անցավ և մեր գութը շարժելու համար, յուր ընկերների կողմից հետևյալ սրտառուչ բանաստեղծությունն արավ:

Ո՞վ երջանիկ աշխարհականներ, եղել է ժամանակ, երբ քահանաներն այնքան անշահասեր, պարտաճանաչ և առաքինի են եղել, որ մի ճշմարտություն քարոզելու, կամ պաշտպանելու համար, նույնիսկ, իրենց անձն են զոհել, նահատակվել են: Բայց այդ եղել է այն ժամանակ, երբ նրանք ապրում էին ո՞չ թե «հացիվ», այլ՝ «բանիվն աստծո» . այսօր, իհարկե, այդպիսի քահանաներ չկան, եղածները մենք ենք. իսկ մեզանից ամեն մինը, ինչպես գիտեք, ունի մի ջվալի չափ ստամոքս, որն անհնար է լցնել «բանիվն աստծո»: Այդ պատճառով մենք սիրով ընդունում ենք ձեր առաջարկությունը: Թող խավարամիտ էմին Տեր-Գրիգորյանը մեզ այս առիթով անվանե հացկատակ, թող ուրիշ հետադիմականներն էլ անվանեն, թեկուզ պորտաբույծ, պնակալեզ, մեզ համար միևնույն է, միայն թե մենք չզրկվենք անուշահոտ տոլմից, դավուրմով փլավից, և մանավանդ, Սևանի իշխան ձուկից, որն ամեն անգամ վայելելուց մարդ լցվում է հայրենասիրական կրակով... Այո՛, թող մեզ անվանեն ինչ ուզում են, միայն թե անպակաս ունենանք հիշյալ բարիքները, մեր ներքին ու արտաքին փարաջաները և ձմեռ ժամանակ՝ բոխու փայտով տաքացրած մեր սենյակները, ուր տիրակնոջ կողքին հանգիստ նստած, խոսինք աշխարհի ունայնության մասին, կամ ոգևորված ժամանակ «ջան» ասենք, «ջան» լսենք:

«Հայոց հոգևոր դպրոցում, շարունակում էր տեր հայրը, աշխարհակա՞ն լինի հոգաբարձու թե՛ հոգևորական, դպրոց լինի՞, թե՝ չլինի, մեզ համար միևնույն է, մեզ հարկավոր են երեխաներ, որ մկրտենք, երիտասարդներ, որ պսակենք, և մեռելներ, որ թաղենք: Այս երեք բանը մեզ տվեք, իսկ մնացյալը, թեկուզ, ջուր ածեցեք, մեզ ի՞նչ...

«Այս դիտումներով, ահա՛, մենք ընդունում ենք ձեր առաջարկությունը և հանդիսաբար խոստանում ենք, որ քթներս չենք երևցնիլ հոգաբարձու ընտրող ժողովի մեջ, որպեսզի աշխարհի առաջ ապացուցանենք, թե մենք ենք «հովիվ քաջ, որ դանձն յուր դնէ ի վերա ոչխարաց»:

Քահանաների այս անձնվեր որոշումից զգացված, ես մի պունշ առաջարկեցի նրանց: Հետո իրավունք առնելով նրանցից խոսել իրենց փոխարեն ժողովում ինչ որ կամենանք, ճանապարհ դրինք նրանց սիրով և խաղաղությամբ:

Հետևյալ օրը հանդիսավոր զեկուցումն արի պատգամավորների ժողովում, հայտնելով, թե մեր քահանաները, կամենալով հավատարիմ մնալ հայոց եկեղեցու ժողովրդական ոգուն, խմբովին հրաժարվում են հոգևոր իշխանության հրամանը կատարելուց, ուրեմն և մեր կամքի հակառակ հո հոգաբարձու ընտրվելուց, որով և արժանավոր ապտակ են տալու ում որ անկէ, հասկացնելու համար, թե չպետք է ամբոխի իրավունքները բռնաբարել: Այս նորությունը, որ առաջադիմականները լսեցին հիացմունքով, իսկ հետադիմականները զայրույթով, մի շաբաթից հետո հրատարակվեց «Հնձվորում», իբրև հայ քահանաների ճշմարտասիրության, ազնվության և անօրինակ անձնվիրության ապացույց, որի նկատմամբ խմբագրությունը ևս յուր կողմից գրեց մի փայլուն առաջնորդող, անվանելով այդ քահանաներին «ազնվության տիպարներ»:

Այս միջանկյալ պատմությունը ես արի, ցույց տալու համար, թե ինչպե՞ս ենք մենք հեղափոխություններ առաջացնում գավառացու լճացած ու բորբոսնած կյանքում: Եվ այս պատճառով է, ահա, որ մեզ ամեն տեղ հանդիպում են սիրով, ակնածությամբ և հաճախ, նույնիսկ, երկյուղով: Մեր խոսքը գավառում, գրեթե, պատգամ է, իսկ ցանկությունը՝ օրենք:

Ե

Հիմա դուք, իբրև դրական հայեր, կասեք, թե բոլոր աշխարհը գործում է շահի համար, մարդիկ վաստակում, կամ քրտնում են որոշ օգուտներ ձեռք բերելու համար, արդ, ձեր շահն ու օգուտը ո՞րն է այս գործում, ինչո՞ւ եք իզուր աշխարհն աղմկում, սրտեր վիրավորում, մտքեր պղտորում, մարդկանց հանգիստը խանգարում:

Այս հարցին մենք ունենք մի պատասխան, այդ այն է, որ մենք գիտենք, թե մենք էլ մարդ ենք, այսինքն շահ ասված բանի համար մենք էլ մտածում ենք, ուրեմն, մուֆտա չենք ազգասիրություն անում:

Իմ գործունեության առաջին տարիներում իմ ստացած շահը լինում էր միայն բարոյական, այսինքն՝ ես գոհ էի լինում, որ իմ անունը տպվում է աշխարհահռչակ «Հնձվորում», որ ես համարվում էի «հատուկ թղթակից» և որ վերջապես հայ ազգն իմանում է թե երկրագնդի վրա ապրում է «Հակօն»: Բայց հետո, քանի ժողովրդական դարձա և «ձյունի գնդակներ» սկսան ավելի մեծ-մեծ գլորել, նյութական շահեր էի ստանում: Օրինակ, պատահում էր, որ տեր Մաղքոսը գալիս էր Զրօրհնեքին, կամ Զատկին մեր տունն օրհնելու: Նա փող չէր առնում, վախենալով թե միգուցե այդ մասին գրեմ լրագրում: Պատահում էր, որ ես ներկա էի լինում բարեկամի տղայի մկրտության կամ աղջկա թաղման, այդ բարեկամն էլ, իմ շնորհիվ, ազատվում էր ծախքից: Զատկի մուրազի օրը երեցփոխանը, մեր տունը ղրկել էր տալիս 10 թիքա, ամենալավ կտորներից, մինչդեռ ըստ օրինի մեզ կհասներ երկուսը կամ երեքը: Հոգաբարձուներից մի քանիսը հաճությամբ էին լսում ինձ և երբ իմ մորաքրոջ որդու համար հարկավոր եղավ ուսուցչական պաշտոն, նրան իսկույն տեղավորեցին մեր դպրոցում: Այդպես էլ պատահում էր և այն աշակերտներին, որոնք բախտ էին ունենում իմ ազգականները լինելու: նույնիսկ առաջնորդը, պետք է խոստովանել, բարեհաճ էր դեպի ինձ: Նա սիրով հաս արավ իմ հորեղբոր որդու պսակը, որ չհաս էր ազգակցության 5-րդ աստիճանում:

Բայց այս ազգային բարիքներից զատ ես վայելում եմ նաև քաղաքացիական բարիքներ: Օրինակ մեր տան փողոցը միշտ մաքուր է պահվում, մինչդեռ մի քիչ հեռու, մի հետադիմականի տան առաջ, կատարյալ աղբակույտ է: Այս պատճառով ես պարտք եմ համարում հրապարակավ հայտնել, որ մեր քաղաքն

օրինակելի մաքուր է: Քաղաքային վարչության մեջ երկու ազգակիցներս լավ պաշտոն ունին, պարզ է, ուրեմն որ ես այդտեղ չեմ կարող երբեք գեղծում նշմարել: Գնահատող մասնաժողովը, որ հորս կենդանության ժամանակ մեր տան հարկը որոշել էր 7ռ. 50կ., այժմ այդ հարկը իջեցրել է մինչև 3ռ. 25կ.: Ինչպե՞ս չհայտնեմ աշխարհին, որ այդ մասնաժողովը գործում է բարեխղճաբար: Քաղաքում հայտնի մի վաշխառու, որի համար գրել էի, թե տգրուկի պես ծծում է գյուղացիների արյունը, այժմ ինձ պարտք է տալիս առանց առկոսի և երբ ժամանակը լրանում է, սիրով փոխում է իմ մուրհակը, դարձյալ տոկոս չհաշվելով: Այժմ իմ պարտքն է նրա մասին այլևս վատ ոչինչ չգրել: Մինչև անգամ բախալ Համբարձումը, որի մասին գրած էի, թե փտած կամ խակ միրգ է ծախում և խոլերայի տարածման նպաստում, սովորություն է արել ամեն կյուրակե ինձ նվերներ ղրկելու, երբեմն լավ ծիրան, երբեմն բեդանա թութ, յուր ժամանակին խաղող, դեղձ, թուզ, ընտիր սեխ և այլն: Մի անգամ բարեկամներիցս մեկը կատակով հարցրել էր, թե «Համբարձում ապեր, ինչո՞ւ Հակօյին նվերներ ես ուղարկում, իսկ ինձ ոչ» նա պատասխանել էր.

Հակօյի բանն ուրիշ ա, շուն ենք կապում...

Ես, իհարկե, չբարկացա, տգետ մարդ է, ավելի լավ պատասխան տալ չէր կարող:

Բայց ճշմարիտն ասած, զայրույթս զսպել չեմ կարողանում երբ նման վիրավորանքներ ստանում եմ ինտելիգենտ մարդուց: Օրինակ, անցյալները խոսում էր ինձ հետ մի հեռու ազգականս, որ, գլուխը մեռած համալսարանական է և միևնույն ժամանակ, չէ ամաչում իրեն պահպանողական անվանելու: Գրգռված ա'յն հաջողությունից, որ «հատուկ թղթակիցներ» ունինք և այն հարգանքից, որ մենք վայելում ենք գավառում, նա հետևյալ անհեթեթ համեմատությունն արավ.

Դուք շատ նման եք, ասաց, այն պատմական յասաուլ-բաշիներին, որոնք ապրում էին տխրահռչակ մովրովների ժամանակ: Ձեր թե' ունեցած հաջողությունը և թե՛ վայելած հարգանքը նույնն է, ինչ որ ունեին կամ վայելում էին նրանք: Ամեն մի դեպք, կամ հանցանք, որ կատարվում էր ժողովրդի մեջ, ամենից առաջ ծառայում էր այդ յասաուլ-բաշիների օգտին: Նրանք ունեին սուր

հոտառություն և գիտեին, թե ո՞ր դեպքից կարելի է որոշ օգուտ քաղել և ո՞րից՝ ոչ: Այդ պատճառով անցքի տեղն ամենից առաջ հասնում էին նրանք, իբրև կարգապահության հսկող պաշտոնյաներ: Եթե հանցավորը մի երեքանոց, կամ հնգանոց սլլացնում էր յասաուլ-բաշի Նավասարդի ձեռքը, այն ժամանակ կատարված իրողությունը կամ ծածկվում էր բոլորովին, կամ ներկայացվում էր իբրև մի անմեղ իրողություն: Իսկ եթե ոչ, այդ դեպքում յասաուլ-բաշին բարձրագոչ աղաղակով և հեղինակավոր հայհոյանքներով կատարված հանցանքը հայտարարում էր իբրև մեծ եղեռնագործություն և հայտնելով այդ մասին մովրովի օգնականին, հրաման էր ստանում մտրակելով բերել յուր դուռն անհանգիստ հանցավորին: Այստեղ արդեն արդարություն գտնելու համար, հարկավոր էր սլլացնել ոչ թե Նավասարդի արած պահանջի չափ, այլ տասն անգամ ավելի, որպեսզի գործը չհասներ մովրովին, որի արդար դատաստանից խուսափելու համար՝ կհարկավորվեն հարյուրներ և այն ոսկե դրամով, ինչպես վիպասան Պռոշյանն է վկայում յուր «Հացի խնդրում»:

Հատուկ թղթակիցներին նմանեցնելով յասաուլ-բաշիների, խավարամիտ ազգականս այն բարբարոս միտքն էր հայտնում, իբր թե մենք էլ նրանց եղանակով հարստահարում ենք ժողովրդին, կաշառ ենք առնում նրանից կամ երեսպաշտություն անում: Մեծ բախտավորություն է, որ այդ ապուշը չի հրատարակել այս կարծիքը պարբերական թերթերում, ապա թե ոչ, հայ ընթերցողները, որոնք մեծ մասամբ բթամիտ են լինում, հալած յուղի տեղ կընդունեին այդ բարբաջանքը:

Բայց ես, որպեսզի ապացուցանեի իմ ծանծաղամիտ ազգակցին, թե իբրև թղթակից, որքան անաչառ եմ, ասացի.

Մեր ու յասաուլ-բաշիների մեջ, արդարև, կա նմանություն, բայց այդ նմանությունը ոչ թե դրական, այլ հակադրական է. օրինակ նրանք հսկում էին քաղաքի արտաքին կարգապահության, իսկ մենք հսկում ենք ներքինին: Նրանք օգտվում էին մարդկանցից նյութապես, իսկ մենք օգտվում ենք բարոյապես: Նրանց հարգում էր ժողովուրդն իբրև փոքրագույն չարիքի, իսկ մեզ իբրև փոքրագույն բարիքի: Նրանք ծածկում էին ճշմարտությունը, երբ շահ էին ունենում և հայտնում, երբ չէին ունենում, իսկ մենք, ընդհակառակը, հայտնում

ենք, երբ շահ չենք ունենում և ծածկում, երբ ունենում ենք: Նրանք մտրակում էին անհանգիստ մարդկանց, իսկ մենք մտրակում ենք խիստ հանգիստներին: Նրանք հայհոյում էին լեզվով, իսկ մենք հայհոյում ենք գրչով, միով բանիվ, նմանություն կա, բայց այդ նմանությունը բացասական, հետևապես և բարոյական է:

Մի վերջին, հակադիր նմանություն ևս, որ չեմ կարող զանց առնել, այն է, որ յասաուլ-բաշիների կամ մովրովների անունն անմահացնողը եղել է մի խավարամիտ Պոռշյան, իսկ մերը պիտի անմահացնե մի ազատամիտ առաջադիմական:

Այսքանը, կարծեմ, բավական է հասկանալու համար թե ո՞վ ենք մենք: